| | Ամ. | Ամս. | Թ. Աբր. | Ուղղ. | Ն. Ք. |
|---|---|---|---|---|---|
| 13. Մանու Գ. Շափլուլ . . . . . . . . . | 18 | 7 | 1990 | 1989 » | 28 |
| 14. (Աբգար Ե. Ուկկամա . . . . . . . . . | 10) | – | — | 2007 » | 10 |
| | | | | | Յ. Ք. |
| 15. Մանու Գ. բար Մանու . . . . . . . . | 6 | – | (2015) | 2017 » | 1 |
| Աբգար Ե. Ուկկամա, երկրորդ անգամ . | 37 | 1 | 2024 | 2023 » | 7 |
| 16. Մանու Ե. բար Աբգար . . . . . . . . | 7 | –) | (2020) | 2060 » | 44 |
| 17. Մանու Զ. բար Աբգար . . . . . . . . | 14 | – | 2067 | 2067 » | 51 |
| 18. Աբգար Զ. բար Մանու . . . . . . . . . | 20 | 4 | 2081 | 2081 » | 64 |
| 19. Աբգար Է. բար Իզատ . . . . . . . . . | 6 | 9 | 2101 | 2101 » | 85 |
| Անիշխանութիւն . . . . . . . . . . . | 2 | – | 2106 | 2108 » | 92 |
| 20. Իլուռ փառնադասփատ . . . . . . . . | 3 | 10 | — | 2110 » | 95 |
| 21. փառնադասփատ . . . . . . . . . . | – | 10 | 2113 | 2114 » | 98 |
| 22. Մանու Է. բար Իզատ . . . . . . . . . | 16 | 8 | — | 2115 » | 99 |
| 23. Մանու Ը. բար Մանու . . . . . . . . . | 24 | – | 2130 | 2131 » | 115 |
| 24. Վայել բար Սահառ . . . . . . . . . . | 2 | – | 2154 | 2155 » | 139 |
| Մանու Ը. երկրորդ անգամ . . . . . . . | 12 | – | — | 2157 » | 141 |
| 25. Աբգար (Թ) բար Մանու, միայն . . . . | 35 | – | 2169 | 2169 » | 153 |
| 26. Աբգար Սեւերոս և իւր որդին . . . . | 1 | 7 | (2203) | 2204 » | 188 |
| 27. Մանու (Թ) բար Աբգար . . . . . . . . | 26 | – | — | 2206 » | 190 |
| Վախճան թագաւորութեան . . . . . . . . . | | | 2233 | 2232 » | 216 |

Գումար. — 27 թագաւորք, 352 ամք, 2 ամիս։

Շարունակելի

Թարգմանեաց

Ն. Ք.

---

# ԱՌԱԿ

Երթային երկու՝ անդրիկնոսք 'ի վաճառ, և մի-նըն շատ զանձ ունէր 'ի հետն, և իմացաւ՝ որ ընկերն չարակնութեամբ հայէր յինքն և 'ի սիրտն նենգէր։ Գնացին 'ի յայն վայր՝ վայրե տեղ մի, ուր օթևանք առնէին, և այն որ ըզ-գանձն ունէր՝ կու երկընչէր յընկերէն. դրին զգլխնին՝ որ 'ի քուն լինէին։ Յարեաւ ընկերն զաղտ, և էր գիշեր. ա՛ռ մեծ վէմ մի, մեկնեաց, և էառ դդում մի, և արար զլուխ յիւր տեղն, և ինքն զաղտ 'ի զատ եկաւ՝ տեսանել զայն նենգաւորն թէ զինչ կամէր գործել։ Ելաւ նա 'ի մէջ գիշերին, էառ մեծ քար՝ որչափ կարաց, և եձու 'ի վերայ դդմին, գիտաց թէ ընկերոջ գը-լուխն էր. ճայթեաց դդումն և չրջեցաւ։ Յայն-ժամ ձայնեաց անդրիկնոսն. «Ահա, անհաւատ ընկեր, զքո անհաւատութիւնդ 'ի դդումն փոր-ձեցի». և փախեաւ 'ի նմանէ։ — Ցուցանէ ա-ռակս թէ Աստուած օգնական է մարդոյն, բայց պատրաստ կենալն պահէ. զի Աստուած իմաս-տութիւն է տուեալ մարդոյն՝ այս զմարդն՝ զոր փորձեալ ես 'ի սակաւ իրս, 'ի բան և 'ի գործ, որ ինքն մնաակար է և նենգաւոր և անհա-ւատ, զուն յիւրմէն պատրաստ կեցիր։

ՈՍԿԻՓՈՐԵԿ

digitised by A.R.A.R.@